

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2000թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 558.7 հազ.տոննա, որը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 22.1 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 465.5 մլն.տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 1.0 տոկոսով:

2000թ. հունվար-փետրվարի, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ.հունվար-փետրվար	2000թ. հունվար-փետրվարը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով	2000թ.փետրվար	2000թ. փետրվարը 2000թ. հունվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	558.7	77.9	294.2	111.2
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	145.3	105.5	91.4	169.6
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	11.8	50.9	10.5	8.1 անգամ
ներկրվել են բեռներ	127.2	159.0	75.7	147.0
ներհանրապետական փոխադրումներ	6.3	18.4	5.2	4.7 անգամ
ավտոտրանսպորտով	194.3	54.2	89.7	85.8
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ դրանից	4.8	36.9	2.9	152.6
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներկրվել են բեռներ դրանից	1.1	23.4	0.8	2.7 անգամ
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներհանրապետական փոխադրումներ	27.6	108.7	16.6	150.9
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներհանրապետական փոխադրումներ	6.9	81.2	4.4	176.0
Ներհանրապետական փոխադրումներ	161.9	50.6	70.2	76.6
օդային տրանսպորտով	1.6	114.3	0.8	100.0
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	0.6	200.0	0.3	100.0
ներկրվել են բեռներ	1.0	90.9	0.5	100.0
խողովակաշարային տրանսպորտով	217.5	98.8	112.3	106.7

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 5.5 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 87.6 տոկոս (1999թ. հունվար-փետրվարի 58.1 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 8.1 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 17.0 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներին՝ 4.3 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 24.9 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-փետրվարին 1999թ. հուն-

վարի-փետրվարի նկատմամբ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալը ավելացել է 91.4 տոկոսով, իսկ սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 93.1 տոկոսով, ցեմենտինը՝ 58.2 տոկոսով, նավթ և նավթամթերքներինը՝ 46.9 տոկոսով, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 18.8 տոկոսով և սև մետաղներինը՝ 14.3 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 26.0 տոկոս, նախորդ տարվա հունվար-փետրվարի 19.2 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-փետրվարին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 30.4 տոկոսով, կազմելով 43.3 մլն. տոննա-կմ: Վազոնների միջին օրական բեռնաթափումը նույն ժամանակաշրջանում կազմել է 39 վազոն և նախորդ տարվա հունվար-փետրվարի նկատմամբ մնացել անփոփոխ, իսկ բեռնումը նվազել է 12 միավորով և կազմել 5 վազոն՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի 17-ի դիմաց: Նույն ժամանակաշրջանում 5.2 օրով դանդաղել է վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 194.3 հազ.տոննա (1999թ. հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 45.8 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 14.2 տոկոս (1999թ. հունվար-փետրվարի 7.1 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 25.0 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 33.5 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 3.6 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 22.9 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 36.1 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 83.3 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի 89.3 տոկոսի դիմաց): 2000թ. հունվար-փետրվարին բեռնաշրջանառությունը կազմել է 3.6 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 10.0 տոկոսով:

2000թ հունվար-փետրվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 34.8 տոկոս՝ 1999թ. հունվար-փետրվարի 49.9 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 1.6 հազ. տոննա (1999թ. հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 14 .3 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 62.5 տոկոս (1999թ. հունվար-փետրվարի 78.6 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 37.5 տոկոս (1999թ. հունվար-փետրվարի 21.4 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 1.3 մլն.տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 13.3 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 0.1 տոկոսով:

2000թ. հունվար-փետրվարին, ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներկրվել 217.5 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի համեմատ նվազել՝ 1.2 տոկոսով, բեռնաշրջանառությունը՝ 1.2 տոկոսով և կազմել 417.3 մլն տոննա-կմ: 2000 թ. հունվար-փետրվարին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 38.9 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի 30.7

տոկոսի դիմաց:

Ուղևորափոխադրումներ: 2000թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը (առանց էլեկտրատրանսպորտի) կազմել է 18484.9 հազ.մարդ, որը 1999թ. հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.4 տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 309.3 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 2.8 տոկոսով:

2000թ. հունվար-փետրվարին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ.հունվար-փետրվար	2000թ.հունվար-փետրվարը 1999թ.հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով	2000թ. փետրվար	2000թ.փետրվարը 2000թհունվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	18484.9	99.6	9227.6	99.7
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	92.2	45.2	43.4	88.9
ավտոտրանսպորտով	18320.6	100.2	9150.0	99.8
օդային տրանսպորտով	72.1	91.3	34.2	90.2

2000թ հունվար-փետրվարին, ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը՝ կազմել է 0.5 տոկոս (նախորդ տարվա հունվար-փետրվարի համապատասխան ցուցանիշի 1,1 տոկոսի դիմաց), ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 99.1 տոկոս, նախորդ տարվա 98.5 տոկոսի դիմաց, իսկ օդային տրանսպորտինը կազմել է 0.4 տոկոս և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ:

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 54.8 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 4.6 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 25.8 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ ավելացել է 0.2 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 238.2 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 0.2 տոկոսով:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին, ըստ օդային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 72.1 հազ. մարդ, որի 49.4 տոկոսը (35.6 հազ. մարդ) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը: Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 0.6 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվար-փետրվարի

0.5 տոկոսի դիմաց):

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 66.5 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 10.7 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ: 2000թ. հունվար-փետրվարին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 4141.2 հազ.մարդ և 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել 20.0 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 17.1¹մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-փետրվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 20.5 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-փետրվարին կազմել է 54.5 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 28.9, տրամվայով՝ 16.3 և ճոպանուղով՝ 0,3 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2000թ. հունվար-փետրվարին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է շարժակազմի հետ կապված պատահարների 116 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 0.9 տոկոսով: Պատահարներից զոհվել է 33 և վիրավորվել 127 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխանաբար 29 և 137 մարդու դիմաց:

¹ Բազիսային ցուցանիշը ճշգրտված է: